Հանրապետութիւնում եւ հայոց Արցախում իրադրութիւնը մնում է գերլարուած։ Շարունակւում են խորհրդային բանակի եւ ազերի ՕՄՕՆականների յարձակումները սահմանամերձ գիւղերի վրայ։

Գետաշէնի ենթաշրջանից բնիկ ժողովրդի՝ հայութեան ցեղասպանութիւնից ու տեղահանութիւնից յետոյ, ամեն հիմք կայ սպասելու, որ նոյն գործողութիւնները շարունակուելու եւ տարածուելու են Շահումեանի շրջանում, Բերդաձորում եւ այլ ռազմավարական նշանակութեան բնակավայրերում։

Գորբաչովը Վիլնիուսի սպանդից յետոյ «դաստիարակչական» արիւնոտ դասեր է տալիս ազգային ազատագրութեան դրօշը պարզած հայութեանը։

Խորացող ճգնաժամի կանխման, Հայաստանի անվտանգութեան ապահովման նպատակով անհրաժեշտ է ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՀԱՅԵԱՑ ԵՒ ՀԱՒԱՍԱՐԱԿՇԻՌ քաղաքականութիւն։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ ԶԱՒԹՈՒՄ Է ԳՈՐԻՍԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳԻՒՂԵՐԸ

Գորիս, 7 Մայիսի, Մ.Տ.Կ.,- Մայիսի 7ի առաւօտեան ժամը 6ի տուեալներով խորհրդային զօրքը մտել է Գորիսի շրջանի սահմանամերձ բոլոր հայկական գիւղերը։ Տարբեր գիւղերից զինուորները պատանդ են վերցրել 20 մարդ եւ տարել անյայտ ուղղութեամբ։ Ըստ տեղեկութիւնների, վիրաւորուել են 7-8 հայեր։ Իրականացուող գործողութիւնների ողջ ընթացքում Գորիսի եւ գիւղերի վրայով փոքր բարձրութեան վրայ թռել են զինուորական ուղղաթիռներ։

Շուռնուխ գիւղը ենթարկուել է գնդակոծութեան, որից յետոյ գիւղ է իջեցուել դեսանտային ջոկատ։ Կան վիրաւորներ, որոնք տեղափոխուել են Գորիսի հիւանդանոց. 15 հոգու պատանդ են տարել Կուբաթլու։ Զրահամեքենաներից կրակել են խոզնավար գիւղի վրայ։

Մայիսի 7ին առաւօտեան ժամը 6ին Կոռնիձորի անասնապահական համալիրի վրայ, որտեղ գիւղի անասնապահների անվտանգութիւնն էին ապահովում ՄՕՅԶի 11 ոչ տեղացի մարտիկներ, միլիցիայի մէկ մայորի եւ մէկ կապիտանի հետ համատեղ, հրանօթային կրակ է բացուել Լաչինի շրջանի կողմից։ Նոյն կէտից հրանօթային կրակ է բացուել նաեւ Գորիսի շրջանի Տեղ գիւղի ուղղութեամբ։ Զգալով կանխահաս վտանգը, անասնապահները վերադառնում են գիւղ, իսկ ՄՕՅԶի մարտիկները մտածելով, որ հեռանալը դաւաճանութիւն կը լինի մնում են իրենց տեղերում։ ԽՍՀՄ ՆԳ նախարարութեան յատուկ նշանակութեան ջոկատայիններ, երկու զրահամեքենաներով եւ մէկ ՈՒՐԱԼ մակնիշի մեքենայով (մօտ 30 հոգի) Լաչինի շրջանի կողմից մտնում են Հայաստանի տարածքը։ Հեռուից խորհրդային բանակի զինուորները նշանառութեան տակ էին պահում ՄՕՅԶի մարտիկներին։ 15 րոպէ անց ահազանգ ստանալով Կոռնիձորից, Գորիսի ՆԳ բաժնի 3 միլիցիոներներ մեկնում են դէպքի վայր։ Տեղ հասնելով, խմբի աւագը փորձում է բանակցութիւնների մէջ մտնել խորհրդային բանակի մայորի հետ։ Սակայն վերջինս միլիցիայից նոյնպէս պահանջում է զինաթափ լինել։ Դժուարութեամբ յաջողւում է համոզել զինուորական մայորին, որ միլիցիայի զէնքերը պէտք է մնան անձեռնմխելի։ Մայորը բանակի գործողութիւնները մեկնաբանում էր այսպէս. Շուռնուխից հայ գրոհայինները գնդակոծել են մեր զինուորական ուղղաթիռը, որի մէջ գտնուել է բանակի մէկ գեներալ, գործի հետաքննութիւնը անցկացնելու նպատակով ստիպուած ենք ձեր ներկայութեամբ այս 11 հոգուն տեղափոխել Լաչինի շրջանի զինուորական պարետատուն։ Գորիսի ՆԳ բաժնի միլիցիայի մայորը եւ կապիտանը ստիպուած ենթարկւում են։ Զինուորականները վերջնագիր էին ներկայացրել ՄՕՅԶի մարտիկներին. եթէ վերջիններս զէնքը վայր չդնեն 20 րոպէից, ապա բոլորին կը կոտորեն։ Խորհրդային բանակի զինուորները զինուած էին բոլոր տրամաչափի զէնքերով։ Զինուորականների ներկայացուցիչը ասաց, որ իրենք կատարում են հրաման եւ անմիջապէս ենթարկւում են ԽՍՀՄ ՆԳ նախարար Պուգոյին։ «Եթէ ցանկանում էք, որ տղաները շուտ ազատուեն, ապա

Շար. էջ 2 →

ԴԱՐՁԵԱԼ ԶՐԱՀԱՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ

ԴԱՐՁԵԱԼ ՍՈՒԻՆՆԵՐՈՎ

պէտք է դիմէք Պուգոյին»։ Գորիսի ՆԳ աշխատակիցների ներկայութեամբ նրանք ՄՕՅՁի մարտիկների զէնքերը, զինամթերքը եւ զրահազգեստները բարձեցին իրենց հետ բերուած «Ուրալ» մեքենան եւ իրենց հետ վերցնելով ՄՕՅՁի մարտիկներին, շարժուեցին Լաչինի ուղղութեամբ։

Կոնիձորն այս պահին գտնւում է խուճապի մէջ։ Առանց որեւէ պաշտօնական յայտարարութեան գիւղի բնակչութեան մօտաւորապէս կէսը լքել է գիւղը եւ եկել Գորիս։

Այսօր առաւօտեան ժամը 6ին հրթիռներով զինուած երեք զինուորական ուղղաթիռներ պտտւում էին Գորիսի վրայ, իսկ նրանցից մէկը, թեքուելով Շուռնուխ գիւղի մօտ գտնուող ռադիո-հեռուստակայանի կատարի տեղամաս, սկսում է այն գնդակոծութեան ենթարկել։ Այնուհետ, երբ այնտեղ գտնուող երկու հերթապահները եւ ՄՕՅՁի երեք մարտիկները Գորիսի ռադիոկայանի պետին են զանգահարել եւ յայտնել հեռուստակայանի գնդակոծութեան մասին, հեռուստակայանը թողնելու հրահանգ են ստացել։ Առայժմ 5 հայերի հետագայ ճակատագիրը անյայտ է։ Հեռուստահաղորդումները դադարեցուած են։

Արաւուս գիւղում պայթեցրել են հսկիչ կէտը, ոչնչացրել մէկ տրակտոր, խուզարկել են անասնագոմը, գողացել գոյքը։

Գորիս-Կապան ճանապարհի վրայ զինուորները յարձակուել են «Կամազ» մակնիշի մեքենայի վրայ, գնդակոծել այն։ Երեք ուղեւորները վիրաւորուել են։ Լկտիաբար վիրակապ առաջարկելով վիրաւորներին, զինուորները խուզարկել են մեքենան։

Գնդակոծութիւնը շարունակւում է։